**ՏԵՂԵԿԱՆՔ**

**2018թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ**

2018թ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է ընդամենը 1988 (2017թ. -500) նյութ, որից 1469-ով (2017թ. -403) հարուցվել են քրեական գործեր, 451-ով (2017թ. -96)՝ քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 410-ը (2017թ. -90)՝ արդարացման, 41-ը (2017թ. -6)՝ ոչ արդարացման հիմքով: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին 13 (2017թ. -1) նյութի որոշում վերացվել և հարուցվել է քրեական գործ՝ դատախազի կողմից: Բացի հարուցված 1469 (2017թ. -403) քրեական գործից հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 337 (2017թ. -357) քրեական գործ, որից 101-ը (2017թ. -57)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 206-ը (2017թ. -224)՝ այլ մարմնից ստացված, 4-ը (2017թ. -2)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 26-ը (2017թ. -74)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 266 (2017թ. -245) քրեական գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված ընդհանուրը 2072 (2017թ. -1005) քրեական գործից ընդամենը ավարտվել է 749 (2017թ. -520) գործի վարույթ, որից 472-ի (2017թ. -309) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 126-ինը (2017թ. -62)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթը ավարտված մնացած 151 (2017թ. -148) քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2072 (2017թ. -1005) քրեական գործից 88-ի (2017թ. -79) վարույթը կասեցվել է, որից 64-ինը (2017թ. -51) անձը հայտնի չլինելու, 23-ինը (2017թ. -27)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ինը (2017թ. -1)՝ այլ հիմքերով: 142 (2017թ. -72) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 415 (2017թ. -98) գործ՝ միացվել է, 678 (2017թ. -236) գործի նախաքննություն փոխանցվել է 2019թ.:

**2018թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի 2072** (2017թ. -1005) **քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 960** (2017թ. -599) **անձինք:**

Քրեական հետապնդման ենթարկված 960 (2017թ. -599) անձանցից 113-ը (2017թ. -114) ձերբակալվել է, նրանցից 69-ը (2017թ. -27) ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 819-ի (2017թ. -498) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 746 (2017թ. -494) անձի մեղադրանք է առաջադրվել: 90 (2017թ. -116) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 6-ը (2017թ. -4) մերժվել է, 84-ը (2017թ. -112)՝ բավարարվել, 33 (2017թ. -25) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 54 (2017թ. -32) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 31 (2017թ. -16) մեղադրյալ ազատվել է կալանքից, որից դատախազի կողմից 15-ը (2017թ. -7), դատարանի կողմից՝ 16-ը (2017թ. -7): 296 (2017թ. -151) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 61-ինը (2017թ. -76)՝ արդարացման, 235-ինը (2017թ. -75)՝ ոչ արդարացման հիմքով:

Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 3 (2017թ. -2) որոշում: Դատի է տրվել 288 (2017թ. -300) անձ, որից 40-ը (2017թ. -64) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 386 (2017թ. -152) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված անձանցից 9-ը (2017թ. -23) գտնվել են կալանքի տակ:

**Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը՝**

2018թ. ընթացքում **պաշտոնեական դիրքն օգտագործելով մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու (ՀՀ քր. օր 143-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ.-0) նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու (ՀՀ քր. օր 147-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ.-0) նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 149-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ. -1) նյութ, որով հարուցված քրեական գործը կարճվել է արդարացման հիմքով (2017թ. -1 նյութով գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով):

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 164-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ.-0) նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթ է ընդունվել 2 (2017թ.-0) քրեական գործ՝ 1-ը՝ ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմնից ստացված, 1-ը՝ քրեական գործից անջատված մաս: Քննված 2 քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 2 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 3 (2017թ. -0) անձ, որի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քր. օր 178-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 189 (2017թ. -8) նյութ, որից 145-ով (2017թ. -5) հարուցվել է քրեական գործ, 30-ով (2017թ.-1)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 29-ով (2017թ.-1) արդարացման հիմքով, 1-ով՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 206 (2017թ. -21) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 36 (2017թ. -8) քրեական գործի վարույթ, այդ թվում 21 (2017թ. -2) գործի վարույթ կարճվել է արդարացման, 10-ինը (2017թ. -1)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 5 (2017թ. -5) գործ մեղադրական

եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 8 (2017թ. -2) գործի վարույթ կասեցվել է, որից 1-ինը (2017թ.-1)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 7-ինը (2017թ.-1)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 10 (2017թ. -3) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 99 (2017թ. -4) գործ միացվել է, իսկ 53 (2017թ. -4) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 206 (2017թ. -21) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 63 (2017թ. -18) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 63 (2017թ. -18) անձանցից 13-ը (2017թ. -6) ձերբակալվել է, նրանցից 5-ը (2017թ. -2) ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 62-ի (2017թ. -13) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 56 (2017թ. -13) անձի մեղադրանք է առաջադրվել: 11 (2017թ. -6) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը (2017թ. -1) մերժվել է, 10-ը (2017թ. -5)՝ բավարարվել, 4 (2017թ. -1) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 6 (2017թ. -3) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 (2017թ. -1) մեղադրյալ ազատվել է կալանքից՝ դատախազի կողմից: 5 (2017թ. -6) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը (2017թ. -3)՝ արդարացման, 4-ինը (2017թ. -3)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 13 (2017թ. -7) անձ, որից 3-ը (2017թ. -5) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 42 (2017թ. -4) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քր. օր 179-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 447 (2017թ. -37) նյութ, որից 383-ով (2017թ. -34) հարուցվել է քրեական գործ, 60-ով (2017թ. -3)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 52-ով (2017թ. -2) արդարացման, իսկ 8-ով (2017թ. -1)՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 487 (2017թ. -101) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 168 (2017թ. -54) քրեական գործի վարույթ, այդ թվում 66 (2017թ. -14) գործի վարույթ կարճվել է արդարացման, 61-ինը (2017թ. -12)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 41 (2017թ. -28) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 15 (2017թ. -10) գործի վարույթ կասեցվել է, որից 9-ինը (2017թ. -7)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 6-ինը (2017թ. -3)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 18 (2017թ. -7) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 69 (2017թ. -3) գործ միացվել է, իսկ 217 (2017թ. -27) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 487 (2017թ. -101) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 171 (2017թ. -87) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 171 (2017թ. -87) անձանցից 24-ը (2017թ. -2) ձերբակալվել է, նրանցից 17-ը (2017թ. -1) ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 152-ի (2017թ. -69) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 171 (2017թ. -72) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 (2017թ. -10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է

(2017թ. -0), 9-ը (2017թ. -10)՝ բավարարվել, 2 (2017թ. -3) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 9 (2017թ. -4) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 (2017թ. -5) մեղադրյալ ազատվել է կալանքից, որից 1-ը (2017թ. -3)՝ դատախազի, 1-ը (2017թ. -2)՝ դատարանի կողմից: 52 (2017թ. -23) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 8-ինը (2017թ. -6)՝ արդարացման, 44-ինը (2017թ. -17)՝ ոչ արդարացման հիմքով: Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու 2 (2017թ. -1) որոշում: Դատի է տրվել 53 (2017թ. -51) անձ, որից 5-ը (2017թ. -1) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 66 (2017թ. -18) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված անձանցից 1-ը (2017թ. -1) գտնվել է կալանքի տակ:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քր. օր 184-րդ հոդված)** վերաբերյալ 2018թ.-ի ընթացքում վարույթում քննվել է 12 (2017թ. -1) քրեական գործ, որից 4-ի (2017թ. -0) վարույթը կարճվել է ոչ արդարացնող հիմքով, 1 (2017թ. -0) գործի վարույթ կասեցվել է անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 7 (2017թ. -1) գործ միացվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 12 (2017թ. -1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 3 (2017թ. -0) անձ, որոնցից 1-ին մեղադրանք է առաջադրվել: Քրեական հետապնդման ենթարկված 3 անձանց վերաբերյալ էլ որոշումներ են կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ոչ արդարացման հիմքով:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու (ՀՀ քր. օր 189.1-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ.-0) նյութ որով հարուցվել է քրեական գործ: Նշված քրեական գործի նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

**Փողերի լվացման (ՀՀ քր. օր 190-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 7 (2017թ. -0) նյութ, որոնցով հարուցվել է 7 (2017թ. -0) քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 12 (2017թ.-8) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 1 (2017թ.-1) քրեական գործի վարույթ, որը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 4 (2017թ.-1) գործի վարույթ կասեցվել է, որից 3-ը՝ անձը հայտնի չլինելու, 1-ը (2017թ.-1) անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 7 (2017թ.-5) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 6 (2017թ. -5):

2018թ. քրեական հետապնդման ենթարկված 6 (2017թ. -5) անձանցից 4-ը (2017թ. -5) ձերբակալվել է: 6 (2017թ. -5) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 5 (2017թ. -5) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2017թ. -3) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են: Դատի է տրվել 1 (2017թ. -5) անձ, որից 1-ը (2017թ. -3) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 4 (2017թ. -0) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված 4 անձինք գտնվել են կալանքի տակ:

**Առևտրային կաշառքի (ՀՀ քր. օր 200-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 22 (2017թ. -4) նյութ, որից 14-ով (2017թ. -4) հարուցվել է քրեական գործ, իսկ 6-ով՝ մերժվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 23 (2017թ. -17) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 12 (2017թ. -11) քրեական գործի վարույթ, այդ թվում 8 (2017թ. -5) գործի վարույթ կարճվել է արդարացման, 2-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 2 (2017թ. -6) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 5 (2017թ. -2) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 6 (2017թ. -4) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 23 (2017թ. -17) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 3 (2017թ. -8) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 3 (2017թ. -8) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 3 (2017թ. -8) անձի մեղադրանք է առաջադրվել: Դատի է տրվել 3 (2017թ. -8) անձ:

**Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակրպիչներին կաշառելու (ՀՀ քր. օր 201-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է նյութեր 3 (2017թ. -3 նյութ), որից 1-ով (2017թ. -3) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 7 (2017թ. -7) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 2 (2017թ. -2) քրեական գործի վարույթ, այդ թվում 1 գործի վարույթ կարճվել է արդարացման, իսկ 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով (2017թ. –1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 գործ ուղարկվել է դատարան բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ): 2 գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 3 գործ ուղարկվել է ըստ ենթակայության:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 7 (2017թ. -7) քրեական գործով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել, իսկ 2017թ. քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված 5 անձանցից 4-ը դատի է տրվել, իսկ 1 անձի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

**Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 214-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 76 (2017թ. -17) նյութ, որից 54-ով (2017թ. -17) հարուցվել է քրեական գործ, 20-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 98 (2017թ. -99) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 38 (2017թ. -39) քրեական գործի վարույթ, այդ թվում 31 (2017թ. -19) գործի վարույթ կարճվել է արդարացման, 5-ինը (2017թ. -9)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 2 (2017թ. -11) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 3 (2017թ. -14) գործի վարույթ կասեցվել է, որից 1-ինը (2017թ. -5)՝ անձը հայտնի չլինելու, 2-ինը (2017թ. -8)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով (2017թ. -1-ը այլ հիմքով): 5 (2017թ. -8) գործ ուղարկվել է

ըստ ենթակայության, 10 (2017թ. -13) գործ միացվել է, իսկ 42 (2017թ. -25) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 98 (2017թ. -99) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 20 (2017թ. -30) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 23 (2017թ. -30) անձանցից 15-ի (2017թ. -26) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 16 (2017թ. -25) անձի մեղադրանք է առաջադրվել: 1 (2017թ. -2) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 7 (2017թ. -6) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը (2017թ. -3)՝ արդարացման, 6-ինը (2017թ. -3)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 2 (2017թ. -13) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 14 (2017թ. -7) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելու (ՀՀ քր. օր 223-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում քննվել է նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված 1 քրեական գործ, որի վարույթը կասեցվել է այլ հիմքով:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր հափշտակելու կամ շորթելու (ՀՀ քր. օր 238-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է արդարացման հիմքով:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման (ՀՀ քր. օր 296-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ. -4) նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2017թ. -4): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է ընդամենը 2 (2017թ. -6) քրեական գործ, որից 1-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1-ի՝ նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հոդվածով քննված քրեական գործով քրեական հետապնդման են ենթարկվել 5 (2017թ. -0) անձինք: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3-ը դատի են տրվել, նրանցից 1-ը գտնվել է կալանքի տակ, իսկ 2 անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

**Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 308-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 396 (2017թ. -155) նյութ, որից 214-ով (2017թ. -107) հարուցվել է քրեական գործ, 170-ով (2017թ. -48)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 160-ով (2017թ. -47) արդարացման, իսկ 10-ով (2017թ. -1)՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 311 (2017թ. -236) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 133 (2017թ. -117) քրեական գործի վարույթ, այդ թվում 103 (2017թ. -83) գործի վարույթ կարճվել է արդարացման, 14-ինը (2017թ. -11)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 16 (2017թ. -23) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 13 (2017թ. -23) գործի վարույթ կասեցվել է, որից 12-ինը (2017թ. -20)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 1-ինը (2017թ. -3)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 22

(2017թ. -21) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 28 (2017թ. -19) գործ միացվել է, իսկ 115 (2017թ. -56) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 311 (2017թ. -236) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 78 (2017թ. -92) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 78 (2017թ. -92) անձանցից 9-ը (2017թ. -19) ձերբակալվել է, նրանցից 1-ը (2017թ. -4) ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 72-ի (2017թ. -74) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 73 (2017թ. -71) անձի մեղադրանք է առաջադրվել: 8 (2017թ. -16) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը (2017թ. -1) մերժվել է, 7-ը (2017թ. -15)՝ բավարարվել, 2 (2017թ. -3) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 17 (2017թ. -3) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 (2017թ. -2) մեղադրյալ ազատվել է կալանքից դատախազի կողմից: 26 (2017թ. -24) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 7-ինը (2017թ. -11)՝ արդարացման, 19-ինը (2017թ. -13)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 28 (2017թ. -56) անձ, որից 3-ը (2017թ. -13) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 39 (2017թ. -10) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված անձանցից 1-ը (2017թ. -2) գտնվել է կալանքի տակ:

**Պաշտոնական լիազորություններն անցնելու (ՀՀ քր. օր 309-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 164 (2017թ. -67) նյութ, որից 115-ով (2017թ. -54) հարուցվել է քրեական գործ, 41-ով (2017թ. -12) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 163 (2017թ. -96) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 77 (2017թ. -58) քրեական գործի վարույթ, որից 73 (2017թ. -58) քրեական գործի վարույթ կարճվել է արդարացման, 1 (2017թ. -0)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 3 (2017թ. -0) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 17 (2017թ. -6) գործի վարույթ կասեցվել է , որից 16-ինը (2017թ. -6) անձը հայտնի չլինելու, 1-ինը (2017թ. -0)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 19 (2017թ. -6) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 26 (2017թ. -13) գործ միացվել է, իսկ 21 (2017թ. -13) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 163 (2017թ. -96) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 23 (2017թ. -4) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 20 (2017թ. -4) անձանց վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 23 (2017թ. -4) անձի մեղադրանք է առաջադրվել: 1 (2017թ. -2) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 1-ինը (2017թ. -0) ոչ արդարացման հիմքերով: 6 (2017թ. -0) անձ դատի է տրվել: 15 (2017թ. -1) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու (ՀՀ քր. օր 310-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 3 (2017թ. -1) նյութ, որից 2-ով (2017թ. -1) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 (2017թ. -2) քրեական գործ: 1 քրեական գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, իսկ 2017թ. քննված 1 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով: 1 (2017թ. -1) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձ չի եղել:

**Կաշառք ստանալու (ՀՀ քր. օր 311-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 147 (2017թ. -53) նյութ, որից 114-ով (2017թ. -47) հարուցվել է քրեական գործ, 21-ով (2017թ. -6)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, 2-ով՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 193 (2017թ. -104) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 67 (2017թ. -48) քրեական գործի վարույթ, այդ թվում 43 (2017թ. -23) գործի վարույթ կարճվել է արդարացման, 4-ինը (2017թ. -0)՝ ոչ արդարացման հիմքով, իսկ 20 (2017թ. -25) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 11 (2017թ. -9) գործի վարույթ կասեցվել է, որից 9-ինը (2017թ. -4)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 2-ինը (2017թ. -5-ինը)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 26 (2017թ. -6) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 25 (2017թ. -13) գործ միացվել է, իսկ 64 (2017թ. -28) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 193 (2017թ. -104) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 87 (2017թ. -73) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 87 (2017թ. -73) անձանցից 23-ը (2017թ. -36) ձերբակալվել է, նրանցից 2-ը (2017թ. -6) ազատվել ձերբակալումից: 81-ի (2017թ. -64) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 67 (2017թ. -63) անձի մեղադրանք է առաջադրվել: 28 (2017թ. -35) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 27-ը (2017թ. -35) բավարարվել են, 9 (2017թ. -1) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 10 (2017թ. -2) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 (2017թ. -3) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման 8 (2017թ. -0) անձի՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 43 (2017թ. -43) անձ, որից 18-ը (2017թ. -25) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 12 (2017թ. -31) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված անձանցից 10-ը (2017թ. -11) գտնվել են կալանքի տակ:

**Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քր. օր 311[1]-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 166 (2017թ. -4) նյութ, որոնցով հարուցվել է 143 (2017թ. -3) քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 160 (2017թ. -10) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 34 (2017թ. -7) քրեական գործի

վարույթ, այդ թվում 28 (2017թ. -6) գործի վարույթ կարճվել է արդարացման, 2-ինը (2017թ. -0)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 4 (2017թ. -1) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2017թ. -0) գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 3 (2017թ. -2) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 98 (2017թ. -0) գործ միացվել է, 24 (2017թ. -1) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 160 (2017թ. -10) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 58 (2017թ. -13) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 58 (2017թ. -13) անձանցից 12-ը (2017թ. -1) ձերբակալվել է, 4-ը ազատվել է ձերբակալումից: 10-ի (2017թ. -12) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 44 (2017թ. -12) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 (2017թ. -2) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան որոնք բավարարվել են, 2 (2017թ. -0) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 7 (2017թ. -1) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 11 (2017թ. -10) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 14-ինը (2017թ. -0)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 17 (2017թ. -2) անձ, որից 2-ը (2017թ. -1) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված կալանքի տակ գտնվող 2 (2017թ. -1) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու (ՀՀ քր. օր 311[2]-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2017թ. -0) նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 5 (2017թ. -0) քրեական գործ, որից 1 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով, 1 գործ միացվել է, 3 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 5 (2017թ. -0) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 1 (2017թ. -0) անձ, որի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով:

**Կաշառք տալու (ՀՀ քր. օր 312-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 47 (2017թ. -10) նյութ, որոնցով հարուցվել է 39 (2017թ. -10) քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 65 (2017թ. -41) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 26 (2017թ. -20) քրեական գործի վարույթ, այդ թվում 5 (2017թ. -3) գործի վարույթ կարճվել է արդարացման, 5-ինը (2017թ. -3)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 16 (2017թ. -14) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 (2017թ. -3) գործի վարույթ կասեցվել է անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 1-ինը՝ անձը հայտնի չլինելու (2017թ. -1): 6 (2017թ. -3) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 10 (2017թ. -4) գործ միացվել է, իսկ 20 (2017թ. -10) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 65 (2017թ. -41) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 137 (2017թ. -103) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 137 (2017թ. -103) անձանցից 20-ը (2017թ. -25) ձերբակալվել է, նրանցից 10-ը (2017թ. -10) ազատվել ձերբակալումից: 79-ի (2017թ. -95) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 93 (2017թ. -95) անձի մեղադրանք է առաջադրվել: 13 (2017թ. -19) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 2-ը (2017թ. -1) մերժվել է, 11-ը (2017թ. -18)՝ բավարարվել, 7 (2017թ. -9) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 (2017թ. -0) մեղադրյալ ազատվել է կալանքից, որից 1-ը դատախազի, 1-ը՝ դատարանի կողմից: 31 (2017թ. -7) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 2-ինը (2017թ. -1)՝ արդարացման, 29-ինը (2017թ. -6)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 60 (2017թ. -59) անձ, որից 7-ը (2017թ. -5) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 23 (2017թ. -36) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ., նշված անձանցից 4-ը (2017թ. -6) գտնվել են կալանքի տակ:

**Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312[1]-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 14 (2017թ.-0) նյութ, որից 11-ով հարուցվել է քրեական գործ, 1-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է՝ ոչ արդարացման հիմքով: 2018թ.-ի ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 12 (2017թ.-1) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 4 (2017թ.-1) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 1 քրեական գործի վարույթ կարճվել է արդարացման, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 2 (2017թ.-1) քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 (2017թ.-0) գործ միացվել է, իսկ 6 (2017թ.-0) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 12 (2017թ. -1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 120 (2017թ. -1) անձ: 101 անձի մեղադրանք է առաջադրվել: 16 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 47-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 2 անձ: Քրեական հետապնդման ենթարկված 55 անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

**Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312.2-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում հարուցվել է 1 (2017թ. -0) քրեական գործ, որը միացվել է այլ քրեական գործի:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 3 (2017թ. -4) անձ, որոնց վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

**Կաշառքի միջնորդության (ՀՀ քր. օր 313-րդ հոդված)** վերաբերյալ ինչպես 2017թ. , այնպես էլ 2018թ. նյութեր չեն նախապատրաստվել: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 4 (2017թ. -3) քրեական գործ, որոնց նախաքննությունը փոխանցվել է 2019թ. (2017թ. -2 քրեական գործ մեղադրական

եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1 գործ կասեցվել է՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 4 (2017թ. -3) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 17 (2017թ. -25) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 17 (2017թ. -25) անձանցից 2-ը (2017թ. -8) ձերբակալվել է, նրանցից 2-ը (2017թ. -1) ազատվել ձերբակալումից: 13-ի (2017թ. -24) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 4 (2017թ. -24) անձի մեղադրանք է առաջադրվել: 1 (2017թ. -8) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել են, 1 (2017թ. -3) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 3 (2017թ. -3) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը (2017թ. -1)՝ արդարացման, 2-ինը (2017թ. -2)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 5 (2017թ. -16) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 9 (2017թ. -5) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քր. օր 314-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 143 (2017թ. -44) նյութ, որից 100-ով (2017թ. -34) հարուցվել է քրեական գործ, 31-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 11-ով՝ ոչ արդարացման հիմքերով (2017թ. -8-ով արդարացման, 2-ով՝ ոչ արդարացման հիմքով): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 139 (2017թ. -103) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 69 (2017թ. -64) քրեական գործի վարույթ, այդ թվում 41 (2017թ. -36) գործի վարույթ կարճվել է արդարացման, 10-ինը (2017թ. -15)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 18 (2017թ. -13) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 7 (2017թ. -5) գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու (2017թ. -1՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով): 8 (2017թ. -6) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 19 (2017թ. -10) գործ միացվել է, իսկ 63 (2017թ. -17) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 117 (2017թ. -61) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 117 (2017թ. -61) անձանցից 8-ը (2017թ. -1) ձերբակալվել է, 7-ը ձերբակալումից ազատվել: 93-ի (2017թ. -51) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 95 (2017թ. -49) անձի մեղադրանք է առաջադրվել: 5 (2017թ. -1) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են և կիրառվել գրավ: 50 (2017թ. -27) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը (2017թ. -10)՝ արդարացման, 49-ինը (2017թ. -17)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 32 (2017թ. -16) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 29 (2017թ. -19) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

**Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը**

**կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու (ՀՀ քր. օր 315[2]-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 13 (2017թ. -11) նյութ, որից 7-ով հարուցվել է քրեական գործ, 6-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով (2017թ. -4-ով հարուցվել է քրեական գործ, 7-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 5-ով արդարացման, 2-ով՝ ոչ արդարացման հիմքով): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 10 (2017թ. -14) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 4 (2017թ. -10) քրեական գործի վարույթ, այդ թվում 4 գործի վարույթ կարճվել է արդարացման, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով (2017թ. -6 գործի վարույթ կարճվել է արդարացման, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան): 1 (2017թ. -0) գործ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 3 (2017թ. -1) գործ միացվել է, իսկ 2 (2017թ. -2) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկվ ած անձինք չեն եղել: (2017թ. ընդհանուրը 5 անձինք):

**Պաշտոնական դիրքն օգտագործելով արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 332-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 3 (2017թ.-0) նյութ, որոնցով հարուցվել է նույնքան գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննված 3 (2017թ.-0) քրեական գործերից 2-ը միացվել են 3-րդ գործին, որի նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու (ՀՀ քր. օր 341-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 5 (2017թ. -11) նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր (2017թ. -10): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 6 (2017թ. -13) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 5 (2017թ. -9) քրեական գործի վարույթ՝ կարճվել են արդարացման հիմքով: 1 (2017թ. -2) գործի նախաքննություն մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու (ՀՀ քր. օր 348-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 3 (2017թ. -0) նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

**Ապացույցները կեղծելու (ՀՀ քր. օր 349-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 13 (2017թ. -14) նյութ, որից 3-ով (2017թ. -12) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 8 (2017թ. -15) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 7 (2017թ. -11) քրեական գործի վարույթ, որից 6-ի (2017թ. -11) վարույթը կարճվել է արդարացման հիմքով, իսկ 1-ը

(2017թ. -0) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2017թ. -1) գործ միացվել է:

Նշված հոդվածով քննված քրեական գործերով քրեական հետապնդում է իրականացվել 1 (2017թ. -1) անձի նկատմամբ, որի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2017թ. -1 անձի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով):

**Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը (ՀՀ քր. օր 352-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 2 (2017թ. -1) նյութ, որոնցով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը (ՀՀ քր. օր 353-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 22 (2017թ. -5) նյութ, որից 11-ով (2017թ. -3) հարուցվել է քրեական գործ, 10-ով (2017թ. -2)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 16 (2017թ. -11) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 9 (2017թ. -9) քրեական գործի վարույթ, որից 1-ով կարճվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով: 1 (2017թ.-1) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 6 (2017թ.-3) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 1 (2017թ. -3) անձ, որի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

**Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (ՀՀ քր. օր 375-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 87 (2017թ. -51) նյութ, որից 83-ով (2017թ. -51) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 132 (2017թ. -96) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 53 (2017թ. -48) քրեական գործի վարույթ, այդ թվում 28 (2017թ. -25) գործի վարույթ կարճվել է արդարացման, 8-ինը (2017թ. -8)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 17 (2017թ. -15) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2017թ. -1) գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 13 (2017թ. -2) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 15 (2017թ. -10) գործ միացվել է, իսկ 50 (2017թ. -35) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 59 (2017թ. -61) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 59 (2017թ. -61) անձանցից 20-ը (2017թ. -5) ձերբակալվել է, նրանցից 18-ը (2017թ. -1) ազատվել ձերբակալումից: 41-ի (2017թ. -42) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 24 (2017թ. -42) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2017թ. -8) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են (2017թ. -1-ը մերժվել է, 7-ը՝ բավարարվել),

1 (2017թ. -3) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 (2017թ. -5) մեղադրյալ ազատվել է կալանքից, որից դատախազի կողմից 1-ը (2017թ. -1), դատարանի կողմից՝ 1-ը (2017թ. -4): 16 (2017թ. -32) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 8-ինը (2017թ. -20)՝ արդարացման, 8-ինը (2017թ. -12)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 35 (2017թ. -30) անձ, որից 1-ը (2017թ. -2) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 14 (2017թ. -16) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Համեմատելով և վերլուծելով կոռուպցիոն բնույթի առավել տարածված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով, 200-րդ, 214-րդ, 308-րդ, 311-րդ, 312-րդ և 313-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննված և դատարան ուղարկված գործերի և դրանցով դատի տրված անձանց ցուցանիշները, պարզ է դառնում, որ.

Ի համեմատ 2017թ.-ի 2018թ. ընթացքում **Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման՝ ՀՀ քր. օր 179-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **386-ով ավել քրեական** գործ (2017թ. - 101 գործ, 2018թ. – 487 գործ), 13-**ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 28 գործ, 2018թ. – 41 գործ) և **դատի է տրվել 2-ով ավել անձ** (2017թ. - 51 անձ, 2018թ. – 53 անձի):

Նույն ժամանակահատվածում **առևտրային կաշառքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **6-ով ավել քրեական** գործ (2017թ. -17 գործ, 2018թ. -23 գործ), 4-**ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 6 գործ, 2018թ. – 2 գործ) և **դատի է տրվել 5-ով պակաս անձ** (2017թ. - 8 անձ, 2018թ. – 3 անձի):

**Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **1-ով պակաս քրեական** գործ (2017թ. - 99 գործ, 2018թ. – 98 գործ), 9-**ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 11 գործ, 2018թ. – 2 գործ) և **դատի է տրվել 11-ով պակաս անձ** (2017թ. - 13 անձ, 2018թ. – 2 անձի):

**Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **75-ով ավել քրեական** գործ (2017թ. - 236 գործ, 2018թ. – 311 գործ), սակայն 7-**ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 23 գործ, 2018թ. – 16 գործ) և **դատի է տրվել 22-ով պակաս անձ** (2017թ. - 50 անձ, 2018թ. – 28 անձի):

ՈՒսումնասիրվող ժամանակահատվածում **կաշառք ստանալու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **89-ով ավել քրեական** գործ (2017թ. - 104 գործ, 2018թ. – 193 գործ), սակայն **5-ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 25 գործ, 2018թ. – 20 գործ), բայց **դատի է տրվել 5-ով ավել անձ** (2017թ. - 38 անձ, 2018թ. – 43 անձի):

Նույն ժամանակահատվածում **կաշառք տալու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **24-ով ավել քրեական** գործ (2017թ. - 41 գործ, 2018թ. – 65 գործ), **2-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 14 գործ, 2018թ. – 16 գործ) և **դատի է տրվել 1-ով ավել անձ** (2017թ. - 59 անձ, 2018թ. – 60 անձի):

**Կաշառքի միջնորդության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **1-ով ավել քրեական** գործ (2017թ. - 3 գործ, 2018թ. – 4 գործ), սակայն **2-ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2017թ.-ին** (2017թ. - 2 գործ, 2018թ. – 0 գործ), և **դատի է տրվել 11-ով պակաս անձ** (2017թ. - 16 անձ, 2018թ. – 5 անձի):

Չնայած այն հանգամանքին, որ որոշ հանցատեսակներով դիտվել է էական աճ, սակայն դատարան ուղարկված քրեական գործերը ավելի պակաս են, քան 2017թ. –ին: Սա պայմանավորված է իրավապահ համակարգի որդեգրած այն քաղաքականությամբ, որ կոռուպցիոն գործերով պետությանը պատճառված վնասը վերականգնելու դեպքում կիրառվում է լայն խրախուսական գործիքակազմ և գործուն զղջալու ու այլ ոչ արդարացնող հիմքերով կայացվում են բազմաթիվ որոշումներ քրեական գործի վարույթը կարճելու մասին:

**2018թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի թվով 100 նախապատրաստված և ավարտված նյութերով ու քննված և ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված գույքային վնասը** կազմել է 4. 629. 549. 320 (2017թ. - 361. 445. 834) ՀՀ դրամ: Պատճառված ընդհանուր վնասից վերականգնվել է 3.938.873.757 (2017թ. - 252. 070. 385) ՀՀ դրամը:

**2018թ. ընթացքում այլ պետության իրավասու մարմիններին ուղարկվել է իրավական օգնություն ցույց տալու մասին** 78 միջնորդություն, որից հաշվետու տարվա ավարտին լրիվ կատարվել է 15-ը: Իսկ այլ պետության իրավասու մարմիններից ստացվել են նման 3 միջնորդություն, որից 2-ը կատարվել է լրիվ, իսկ 1-ը՝ չի կատարվել:

**2018թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների կողմից նախապատրաստված** 768 **նյութերի և հարուցված քրեական գործերի համար առիթ են հանդիսացել** 988 (2017թ. - 272) **ֆիզիկական և իրավաբանական անձանց** հաղորդումները, 25-ը (2017թ. -8)՝ ՋԼՄ-ների հաղորդումները և 532 –ը (2017թ. -123)՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի կողմից իրենց լիազորությունները իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը:

**Համաձայն ՀՀ քննչական մարմիններից ստացված տվյալների՝ 2018թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 470-ը** (2017թ. -292) **հանդիսացել են պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ:**

Նշված պաշտոնատար անձինք ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների դասակարգվում են.

1. Ոստիկանության աշխատակիցներ՝ 17 անձ,
   այդ թվում՝
   ա) բաժնի պետի և տեղակալ – 3 անձ,
   բ) անձնագրային բաժնի և բաժանմունքի պետ – 2 անձ,
   գ) անձնագրային խմբի առաջատար մասնագետ – 2 անձ,
   դ) ՔՀ բաժանմունքի պետ – 2 անձ,
   ե) ՔՀԲ օպերլիազոր – 3 անձ,
   զ) Ոստ ՃՏ ծառայության ՀԳԲ ավագ տեսուչ – 1 անձ,
   է) ՀՈԲ տեսուչ (ավագ տեսուչ) – 1 անձ,
   ը) ՃՈ տեսուչ (ավագ տեսուչ) – 1 անձ,
   թ) հերթապահ մասի պետ – 1 անձ,
   ժ) ոստիկան – 1 անձ,
2. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության պաշտոնատար անձինք՝ 3 անձ,
   այդ թվում՝
   ա) հարկադիր կատարող – 3 անձ,
3. ՀՀ ՊԵԿ Պաշտոնատար անձինք՝ 12 անձ,
   այդ թվում՝
   ա) ՊԵԿ վարչության պետ և տեղակալ – 3 անձ,
   բ) ՊԵԿ գլխավոր մասնագետ – 1 անձ,
   գ) հարկային բաժնի, բաժանմունքի պետ և տեղակալ– 3 անձ,
   դ) մաքսային տեսուչ – 3 անձ,
   ե) հարկային տեսուչ – 2 անձ,
   զ) մաքսային անցակետի հերթափոխի պետ և գլխավոր մասնագետ – 2 անձ,
4. ՀՀ ԱԻՆ հրշեջ փրկարար - 1,
5. ՀՀ ՔԿ մարզային քննչական վարչության պետ և քննչական բաժնի պետի տեղակալ -2,
6. ՀՀ ՔԿ քննիչներ (ավագ քնիիչ) - 7,
7. Դատախազության նախկին քննիչ - 1,
8. ԱԱԾ և Զինված ուժեր՝ 4 անձ,
   այդ թվում՝
   ա) ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության բաժնի հերթափոխի պետ և ավագ հսկիչ, – 2 անձ,
   բ) Տարածքային զինկոմիսարիատի բաժնի պետ – 1 անձ,
   գ) ՊՆ զորամասի ՄՀԴ հրամանատար – 1 անձ,
9. ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցներ՝ 15 անձ,
   այդ թվում՝
   ա) ՔԿՀ պետ, պետի տեղակալ – 3 անձ,
   բ) ՔԿՀ բաժանմունքի պետ – 1 անձ,
   գ) հերթապահ – 4 անձ,

դ) մասնագետ – 7 անձ,

Ինչպես նաև այլ պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ՝

1. **Առողջապահության ոլորտում 14 անձ** ՝ դատական բժիշկներ, պոլիկլինիկայի և ԲԿ-ների տնօրեններ և բժիշկներ,
2. **Կրթության ոլորտում 35 անձ** ՝ ԲՈՒՀ-երի, դպրոցների, մանկապարտեզների և կրթական այլ հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, ամբիոնի վարիչ, պահեստապետներ, հաշվապահներ,
3. **Պետական գնումների ոլորտում 2 անձ**՝ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ, նյութատնտեսական ապահովման դեպարտամենտի ֆինանսական վարչության նախկին պետ,
4. **Սոցիալական ապահովության ոլորտում 56 անձ**՝ սոցիալական ապահովության ծառայության բաժնի պետեր, մասնագետներ ու ավագ մասնագետներ, տուն ինտերնատի տնօրեններ, պահեստապետեր, գլխավոր հաշվապահներ, ԲՍՓ հանձնաժողովի վիճակագիր, համայնքապետարանի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ, փոստային բաժանմունքների մասնագետներ,
5. **Էներգետիկ և բնական պաշարների ոլորտում 6 անձ** ՝ բնապահպանության և ընդերքի տեսչության տարածքային բաժնի պետ, պետական ավագ տեսուչ և տեսուչ, անտառապետության անտառապետ, պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ և անտառտնտեսության մասնաճյուղի տնօրեն,
6. **Տեղական ինքնակառավարման ոլորտում 73 անձ**՝ համայնքապետեր, համայնքապետի տեղակալներ, մասնագետ-տնտեսվարներ, հաշվապահներ, քարտուղար, գանձապահներ, մարզպետարանի բաժնի պետ, կոմունալ ծառայության տնօրեններ, քաղաքապետարանի բաժնի պետեր, մասնագետներ և տեսուչներ,
7. **Պաշտպանության ոլորտում 131 անձ**՝ հրամանատարներ, զինկոմիսարիատների աշխատակիցներ և այլն,
8. **Այլ ոլորտներում 91 անձ**՝ հիմանականում առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողներ, ՍՊԸ-ների տնօրեններ, հաշվապահներ, պահեստապետեր, անտառապահներ:

**2018թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների կողմից հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով իրավասու մարմիններին ուղարկվել է թվով 75 միջնորդագիր:**